ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

26.06.2013թ.
202-ի 6

ՀՀ վարչապետ
պարոն Տիգրան Սարգսյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Սարգսյան,

Մեզ է դիմել ՀՀ Վայոց Ձորի մարզի Շատին գյուղի բնակիչ տիկին Անահիտ Աբգարյանը եւ խնդրել է իրեն օգնել տեղեկատվություն ստանալու հարցում: Քաղաքացին մեզ հայտնեց, որ իր տունը գտնվում է քարափլուզման գոտում եւ սողանքների պատճառով վթարվել է: Մի քանի տարի առաջ տունը գնահատվել է որպես 4-րդ կարգի վթարային, սակայն այժմ տունն ավելի է փլուզվել, եւ այդտեղ ապրելը ոչ միայն անհնար է կենցաղային պայմանների առումով, այն նաեւ վտանգավոր կյանքի համար:

Ուստի, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Կարո՞ղ է արդյոք (նախատեսված է արդյոք ՀՀ օրեսդրությամբ կամ պետական որեւէ ծրագրով) ՀՀ քաղաքացի Անահիտ Աբգարյանը ստանալ իր փլուզված տան համար փոխհատուցում՝ այլ տուն գնելու համար (կամ իր փլուզված տան փոխարեն ստանալ այլ տուն նույն համայնքում):
2. Եթե այո, ապա ի՞նչ ընթացակարգով (ու՞մ պետք է դիմել, ի՞նչ փաստաթղթեր ներկայացնել):

Նշենք նաեւ, որ Անահիտ Աբգարյանը այրի է, նաեւ ունի հաշմանդամություն:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան